



COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME  
EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՍՈՒՆՔ

ԿԻՐԱԿՈՍՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

*(Գանգատ թիվ 31237/03)*

ՎՃԻՌ

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

2 դեկտեմբեր 2008

**ՈՒԺԻ ՄԵՉ Է ՄՏԵԼ**

*04/05/2009*

*Վճիռը կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:*

## Կիրակոսյանն ընդդեմ Հայաստանի գործով

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (Երրորդ Բաժանմունք) Պալատը հետևյալ կազմով՝

Josep Casadevall, Նախագահ,

Elisabet Fura-Sandström,

Corneliu Birsan,

Boštjan M. Zupančič,

Alvina Gyulumyan,

Egbert Myjer,

Luis López Guerra, *դատավորներ*

և Stanley Naismith, *Բաժանմունքի քարտուղարի տեղակալ*,  
2008թ. նոյեմբերի 13-ին կայացած դռնփակ նիստում  
կայացրեց հետևյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը.

## ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Գործը սկիզբ է առել 2003թ. սեպտեմբերի 15-ին Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության կոնվենցիայի («Կոնվենցիա») 34-րդ հոդվածի համաձայն ՀՀ քաղաքացի պրն. Լավրենտ Կիրակոսյանի («դիմումատու») կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության բերված թիվ 31237/03 գանգատի առնչությամբ:

2. Դիմումատուին ներկայացնում էին Լոնդոնում գործող Մարդու Իրավունքների Քրդական Ծրագրի (KHRP) փաստաբաններ պրն. Մ. Մյուլլերը, պրն. Թ. Օթթին, պրն. Ք. Յիդիզը և տկն. Լ. Զլարիջը, Երևանում գործող փաստաբաններ պրն. Տ. Տեր-Եսայանը և տկն. Ն. Գասպարյանը և պրն. Ա. Ղազարյանը: ՀՀ Կառավարությունը («Կառավարություն») ներկայացնում էր Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ Կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն. Գ. Կոստանյանը:

3. 2005թ. սեպտեմբերի 12-ին Երրորդ բաժանմունքի նախագահը որոշեց գանգատն ուղարկել Կառավարությանը: Կոնվենցիայի 29-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն որոշվեց նաև իրականացնել գործի ընդունելիության և ըստ էության միաժամանակյա քննություն:

## ՓԱՍՏԵՐԸ

### I. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

4. Դիմումատուն ծնվել է 1960թ. և ապրում է Հայաստանի Քարակերտ գյուղում:

## Ա. Վարչական վարույթը դիմումատուի նկատմամբ

5. Սկսած 1995 թվականից դիմումատուն եղել է Ազգային ժողովրդավարական Միություն (ԱԺՄ) ընդդիմադիր կուսակցության անդամ: 1997 թվականից ի վեր նա ղեկավարել է կուսակցության Բաղրամյանի շրջանի տարածքային գրասենյակը: Նա նաև հողագործ է և զբաղվում է անասնաբուծությամբ իր ֆերմայում:

6. 2003թ. փետրվար և մարտ ամիսներին Հայաստանում տեղի ունեցան նախագահական ընտրություններ: Ընտրությունների առաջին և երկրորդ փուլերից հետո խախտումներ վիճարկող ընդդիմադիր կուսակցությունների կողմից Երևանում կազմակերպվեցին մի շարք բողոքի երթեր:

7. 2003թ. մարտի 21-ին դիմումատուն մասնակցել է Երևանում կայացած երթի, որը համաժողովրդական հանրահավաքի մի մասն էր կազմում: Հանրահավաքից հետո դիմումատուն վերադարձել է Քարակերտ գյուղում գտնվող իր տուն:

8. 2003թ. մարտի 22-ին՝ առավոտյան ժամը 8-ին, ՀՀ ոստիկանության Բաղրամյանի բաժնի երկու աշխատակիցներ այցելում են դիմումատուին իր տանը:

9. Դիմումատուն պնդել է, որ ոստիկանության աշխատակիցները նրան տեղեկացրել էին, որ նա պարտավոր էր իրենց ուղեկցությամբ գնալ ոստիկանության բաժին, քանի որ ինչ-որ մեկը ցանկանում էր տեսնել իրեն՝ առանց հավելյալ պատճառներ տրամադրելու:

10. Կառավարությունը պնդեց, որ ոստիկանության աշխատակիցներն այցելել էին դիմումատուին իր տանը, որովհետև նրան կասկածում էին նախորդ օրվա չարտոնված հանրահավաքին մասնակցելու մեջ:

11. Գործի նյութերից երևում է, որ ոստիկանության աշխատակիցները դիմումատուին խնդրել են իրենց հետ գնալ ոստիկանության բաժին: Նա դիմադրություն է ցուցաբերել, բայց այնուամենայնիվ տարվել է ոստիկանության բաժին:

12. Ոստիկանության բաժնում ձերբակալող ոստիկանության աշխատակիցները կազմել են արձանագրություն դիմումատուին բերման ենթարկելու մասին, որի մեջ նշված էր, որ «[դիմումատուն] [2003] մարտի 21-ին մասնակցել է Երևանում տեղի ունեցած հանրահավաքին և ոստիկանության բաժին բերման ենթարկելիս չի ենթարկվել ոստիկանության աշխատողների օրինական պահանջներին և զագրախոսել է»:

13. Դիմումատուն պնդեց, որ ոստիկանության պետը և նրա տեղակալը տեղեկացրել էին իրեն, որ իր այցելությունը պարտադիր էր նախորդ օրը հանրահավաքին մասնակցելու պատճառով: Դիմումատուին ասվել էր, որ նրան սպառնում էր տասից տասնհինգ օր վարչական կալանք: Նա բանակցել է ոստիկանության աշխատակիցների հետ, որպեսզի իր նկատմամբ կալանքի փոխարեն նշանակվի տուգանք՝ հաշվի առնելով

որոշակի անձնական բնույթի հանգամանքներ, ինչպիսիք էին՝ իր կնոջ հղիությունը և մոտակա ծննդաբերությունը և իր ֆերմայի և անասունների մասին հոգ տանելու անհրաժեշտությունը: Դիմումատուն տեղեկացվել էր, որ դա անհնար էր, քանի որ ակտիվիստներին ժամանակավորապես ձերբակալելու հանձնարարությունները տրվել էին անձամբ ներքին գործերի նախարարի կողմից:

14. Համաձայն ոստիկանության բաժնում դիմումատուի կողմից տրված գրավոր բացատրության 2003թ. մարտի 21-ի հանրահավաքին իր կողմից մասնակցելուն հաջորդող առավոտյան ոստիկանության աշխատակիցներն այցելել էին իր տուն և խնդրել էին իրեն գալ ոստիկանության բաժին: Նա հրաժարվել էր գնալ ոստիկանության բաժին, հետաքրքրվելով պատճառների մասին, ինչին ոստիկանության աշխատակիցները պատասխանել էին, որ առկա էին պարզաբանման ենթակա հարցեր: Ծագում է վիճաբանություն մոտ հինգ թույլ տևողությամբ, որի ընթացքում դիմումատուն ընդունում է, որ վիրավորել էր ոստիկանության աշխատակիցներին և չէր ենթարկվել նրանց օրինական պահանջներին: Այնուհետև նա գիտակցել էր, որ իր արարքները ճիշտ չէին, սակայն արդեն չափազանց ուշ էր և հետևաբար նրան տարան ոստիկանության բաժին:

15. Ոստիկանության աշխատակիցները կազմում են վարչական իրավախախտման արձանագրություն, որի մեջ նշված էր, որ դիմումատուն «չարամտորեն չի ենթարկվել ոստիկանության աշխատողների օրինական պահանջներին և մոտ հինգից յոթ թույլ տևող զազրախոսել է»: Դիմումատուին մեղադրանք է ներկայացվում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի («ՎԻՎՕ») 182-րդ հոդվածով: Այս արձանագրությունը ստորագրվել է դիմումատուի կողմից:

16. Ձերբակալությունից մոտ երկու ժամ հետո դիմումատուն բերվում է Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Ս.-ի մոտ:

17. Կարճատև նիստից հետո դատավոր Ս.-ն դիմումատուին ենթարկում է վարչական կալանքի տաս օր ժամկետով ՎԻՎՕ-ի 182-րդ հոդվածի հիման վրա: Դատավորի ամբողջ եզրակացությունը հանգում էր հետևյալ նախադասությանը.

«[Դիմումատուն] 2003թ. մարտի 22-ին, ժամը 08<sup>00</sup>-ին Արմավիրի մարզի Քարակերտ գյուղում չարամտորեն չի ենթարկվել ՀՀ ոստիկանության Բաղրամյանի բաժնի աշխատողների հասարակական կարգի պահպանության պարտականություններ կատարելու ընթացքում արված օրինական պահանջին՝ ոստիկանության բաժին բերման ենթարկելիս չի ենթարկվել, զազրախոսել և խանգարել է նրանց աշխատանքը:»

18. Դատական նիստի արձանագրության համաձայն նիստն անցկացվել էր դռնբաց դատավորի, քարտուղարի և դիմումատուի ներկայությամբ: Դատավորը ծանուցել էր դիմումատուին դատավորի և քարտուղարի դեմ բացարկ հայտնելու և փաստաբան ունենալու իր իրավունքի մասին: Դիմումատուն չէր ցանկացել որևէ բացարկ հայտնել

կամ փաստաբան ունենալ: Դատավորն այնուհետև շարունակել էր՝ անցնելով ապացույցների ուսումնասիրությանը: Դիմումատուն ասել էր, որ Արմավիրի մարզի ոստիկանության բաժնի աշխատակիցները ցանկացել էին իրեն տանել ոստիկանության բաժանմունք, սակայն նա չէր ենթարկվել նրանց հրամաններին: Այնուհետև դատավորն ուսումնասիրել էր ոստիկանության կողմից նախապատրաստված նյութերը: Դիմումատուի կողմից այլ ապացույցներ կամ միջնորդություններ չներկայացվեցին: Դատավորը հեռացավ խորհրդակցական սենյակ, որից հետո նա վերադարձավ և հրապարակեց որոշումը:

19. Համաձայն դիմումատուի դատաքննությունը տեղի էր ունեցել հետևյալ կերպ: Նա բացատրել էր դատավորին իր ընտանեկան հանգամանքները և խնդրել էր իր նկատմամբ վարչական կալանքի փոխարեն նշանակել վարչական տուգանք, ինչին դատավորն անմիջապես պատասխանել էր, որ նա դիմումատուին ենթարկելու է վարչական կալանքի: Դատավորն ավելացրել էր, որ նա անկարող է այլ որոշում կայացնել, քանի որ հետևում է բարձրաստիճան իշխանությունների հրահանգներին: Նիստը տեղի էր ունեցել դատավորի աշխատասենյակում և տևել էր ընդամենը հինգ րոպե:

20. Դիմումատուն տարվել էր Ներքին գործերի նախարարության Արմավիրի մարզի տարածքային ստորաբաժանումում գտնվող Արմավիրի ժամանակավոր պահման վայր պատիժը կրելու համար:

21. Դիմումատուի պնդմամբ ժամանակավոր պահման վայր մեկնելու ճանապարհին ուղեկցող ոստիկանության աշխատակիցներից մեկն իրեն խնդրել էր ստորագրել վերը նշված վարչական իրավախախտման արձանագրությունը, ինչը նա հրաժարվել էր կատարել:

22. Կառավարությունը վիճարկեց այս պնդումը և պնդեց, որ դիմումատուն իրականում ստորագրել էր այս փաստաթուղթը մինչև դատական նիստը ոստիկանությունում գտնվելու ընթացքում:

### **Բ. Դիմումատուի կալանքը**

23. Դիմումատուն պնդեց և Կառավարությունը չվիճարկեց, որ Արմավիրի ժամանակավոր պահման վայրում նրան տեղավորել էին մի խցում յոթ այլ անձանց հետ: Խցի մակերեսը 8.75 քմ էր և այն ուներ շատ փոքր, կեղտոտ մի պատուհան, որը պատված էր երկաթյա կեղտոտ ճաղերով, որոնք խանգարում էին, որպեսզի բնական լույսը ներթափանցեր խուց: Խցում չկային մահճակալներ և կալանավորները ստիպված էին քնել հատակին: Խուցը լի էր մակաբույծներով և միջատներով:

24. 2003թ. մարտի 23-ին դիմումատուն խցի բոլոր կալանավորների անունից նամակ է ուղարկում Արմավիրի մարզի դատախազին և ոստիկանության մարզային ստորաբաժանման պետին՝ խնդրելով իրենց ազատ արձակել կամ որպես այլընտրանք իրենց տեղափոխել ավելի լավ բանտախուց:

25. 2003թ. մարտի 25-ին դիմումատուն և երեք այլ կալանավորներ տեղափոխվեցին մեկ այլ խուց, ինչն ակնհայտորեն վերոնշյալ նամակի արդյունքն էր: Դիմումատուն պնդեց, և Կառավարությունը չառարկեց, որ նոր խցի մակերեսը նույնպես 8.75 քմ էր և որ պատուհանը նույնանման վիճակում էր: Խցում կար միայն երկու մահճակալ և այդ պատճառով կալանավորները ստիպված էին հերթով քնել: Մահճակալների ներքնակները շատ կեղտոտ էին և նրանց չէին տրամադրվել սպիտակեղեն կամ վերմակներ: Խուցը լի էր մակաբույծներով և միջատներով: Խցում լույսը միշտ՝ օր ու գիշեր, միացած էր, և կալանավորները չէին կարող անջատել այն: Չուզարանը տեղակայված էր խցից դուրս և նախատեսված էր ժամանակավոր պահման վայրի այդ հարկում գտնվող բոլոր կալանավորների ընդհանուր օգտագործման համար: Այն շատ կեղտոտ էր, քանի որ հոսող ջուր չկար: Կալանավորներին թույլատրվում էր զուգարանից օգտվել օրվա ընթացքում միայն երեք անգամ՝ առավոտյան, կեսօրին և երեկոյան:

26. Դիմումատուն պնդել է, որ ժամանակավոր պահման վայրում իր գտնվելու ամբողջ ընթացքում կալանավորներին ջուր կամ սնունդ չի տրամադրվել: Ժամանակավոր պահման վայրի աշխատակիցները գումար էին պահանջում ջուր տալու համար: Կալանավորներին սնունդ բերող ցանկացած անձ պարտավոր էր վճարել, որպեսզի սնունդը տրվեր կալանավորներին:

27. ԱԺՄ-ի խորհրդի անդամները դիմում են դատախազություն և Վերաքննիչ դատարան դիմումատուին վաղաժամկետ ազատելու նպատակով: Դիմումատուն պնդել է, որ իշխանությունները մերժել էին երկու դիմումներն էլ և ԱԺՄ անդամներին ոչ պաշտոնապես տեղեկացրել էին, որ իրենք իրավասու չէին դիմումատուին վաղաժամկետ ազատ արձակելու որոշում կայացնել, քանի որ նրանք հրահանգներ էին ստանում ավելի բարձր իշխանություններից:

28. Դիմումատուն այնուհետև պնդել է, որ իր կալանքի երրորդ օրն իր կինը ժամկետից շուտ բարդություններով ծննդաբերել էր և ստիպված էր եղել բուժում ստանալ: Ավելին, 2003թ. մարտի 31-ին կալանքից ազատ արձակվելուց հետո նա վերադարձել էր տուն և հայտնաբերել, որ իր բացակայության ընթացքում իր ֆերմայում մեծ քանակությամբ անասուններ կամ սատկել էին կամ անհետացել:

## II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

### Ա. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը

29. ՎԻՎՕ-ի համապատասխան դրույթների վերաբերյալ ամփոփ տեղեկատվության համար տե՛ս *Գալստյանն ընդդեմ Հայաստանի* վճիռը (*Galstyan v. Armenia*, թիվ 26986/03, պարբ. 26, 15 նոյեմբեր 2007թ.): Վերը նշված վճռում չհիշատակված ՎԻՎՕ-ի դրույթները քննարկվող ժամանակահատվածում գործող խմբագրությամբ սահմանում են.

**Հոդված 182. Միլիցիայի աշխատողի կամ ժողովրդական դրուժինիկի օրինական կարգադրությանը կամ պահանջին չարամտորեն չենթարկվելը**

«Հասարակական կարգի պահպանության պարտականությունները կատարելու ընթացքում միլիցիայի աշխատողի կամ ժողովրդական դրուժինիկի, ինչպես նաև զինծառայողի օրինական կարգադրությանը կամ պահանջին չարամտորեն չենթարկվելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հիսուն տոկոսից մինչև կրկնապատիկը կամ ուղղիչ աշխատանքների նշանակում մեկից մինչև երկու ամիս ժամանակով՝ վաստակի քսան տոկոսի պահումով, իսկ այն դեպքում, երբ ըստ գործի հանգամանքների, հաշվի առնելով խախտողի անձը, այդ միջոցների կիրառումը կհամարվի անբավարար՝ վարչական կալանք մինչև տասնհինգ օր ժամանակով»:

**Բ. «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքը**

30. Օրենքի համապատասխան դրույթները, որոնք ուժի մեջ են եղել խնդրո առարկա ժամանակահատվածում, սահմանում են հետևյալը.

**Հոդված 13. Ձերբակալված և կալանավորված անձանց իրավունքները**

«Ձերբակալված կամ կալանավորված անձն իրավունք ունի՝ ... 3) իր իրավունքների և ազատությունների խախտման վերաբերյալ դիմումներով, բողոքներով, ինչպես անձամբ, այնպես էլ պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի միջոցով դիմել ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին, նրանց վերադաս մարմիններին, դատարանին, դատախազությանը, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, հասարակական միավորումներին և [կուսակցություններին], զանգվածային լրատվության միջոցներին, ինչպես նաև մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին կամ կազմակերպություններին»:

**Հոդված 20. Ձերբակալված և կալանավորված անձանց նյութակենցախային պայմանների ապահովումը**

«...Ձերբակալված և կալանավորված անձանց հատկացված բնակելի տարածքը պետք է համապատասխանի ընդհանուր բնակելի տարածքների համար սահմանված շինարարական և սանիտարահիգիենիկ նորմերին: Ձերբակալված և կալանավորված անձանց հատկացված բնակելի տարածության չափը չի կարող պակաս լինել երկուսուկես քառակուսի մետրից՝ յուրաքանչյուր անձի համար:

Ձերբակալված և կալանավորված անձանց տրամադրում են անհատական քնելու տեղ և անկողնային պարագաներ»:

**Գ. Հայաստանի Հանրապետության Ոստիկանության պետի՝ 2003թ սեպտեմբերի 11-ին հաստատված՝ Հայաստանի Հանրապետության Ոստիկանության համակարգի ձերբակալված**

**անձանց պահելու վայրերի ներքին կանոնակարգը հաստատելու մասին քիվ 8 հրաման**

31. Հրամանի համապատասխան դրույթները սահմանում են հետևյալը.

«[Ձերբակալված անձանց պահելու վայրերի] հատուկ առանձնացված մասնաբաժիններում, [ՎԻՎՕ-ով] սահմանված տևողությամբ պահվում են մաս վարչական կալանքի ենթարկված անձինք...»:

**III. ԿԱԼԱՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՁԵԿՈՒՅՑՆԵՐԸ**

**Ա. Խոշտանգումների կանխարգելման կոմիտեի (ԽԿԿ) զեկույցը 2002թ. Հայաստան կատարած այցի վերաբերյալ- CPT/Inf(2004)25**

32. Ձեկույցի համապատասխան մասերը սահմանում են հետևյալը.

«4. Կալանքի պայմանները

ա. ներածություն

43. Նախ և առաջ ԽԿԿ-ն ցանկանում է ընդգծել այն չափանիշները, որոնք կիրառվում են ոստիկանության պահման վայրերը գնահատելիս:

Ոստիկանությունում գտնվող բոլոր խցերը պետք է լինեն մաքուր, ունենան պահվող մարդկանց քանակին համապատասխան չափսեր, լուսավորում (այսինքն՝ բավարար կարողալու համար, բացառելով քնելու ժամերը) և օդափոխում: Գերադասելի է, որ խցերը սարքավորված լինեն հանգստի միջոցներով (օրինակ, հատակին ամրացված լինեն աթոռ կամ նստարան), իսկ գիշերը այնտեղ անցկացնող անձանց պետք է տրամադրվեն մաքուր ներքնակներ և վերմակներ:

Արգելանքի ենթարկված անձինք անհրաժեշտության դեպքում իրենց բնական պահանջները պետք է բավարարեն մաքուր և պատշաճ պայմաններում՝ ունենալով լվացվելու հարմարանքներ: Նրանք պետք է համապատասխան ժամերին սնունդ ստանան, և ամեն օր առնվազն մեկ անգամ դա պետք է լինի լրիվ կերակուր (այսինքն՝ ավելի էական կերակուր, քան բուտերբրոդն է): Ոստիկանությունում 24 կամ ավելի ժամ արգելանքի տակ պահվող անձինք հնարավորության դեպքում պետք է կարողանան ամեն օր դրսում գրոսնել:

բ. Ժամանակավոր պահման վայրեր

44. Այցի ընթացքում ԽԿԿ պատվիրակությունը այցելեց ժամանակավոր պահման վայրեր Երևանում, Ախուրյանում, Հրազդանում, Մարալիկում և Սևանում: Այս հաստատություններում պահվում են երկու տեսակ կալանավորներ՝ քրեական գործերով կասկածյալները և վարչական կալանքի ենթարկված անձինք:

Այցելած ժամանակավոր պահման վայրերում գոյություն ունեցող կալանքի պայմանները տատանվում էին ընդունելիի (Ներքին գործերի նախարարության

Հրագրանի բաժնում) և վատի (օրինակ, Ներքին գործերի նախարարության Ախուրյանի և Սևանի բաժիններում) միջև:

45. Ինչ վերաբերում է քնակեցվածության մակարդակին, ապա գրանցամատյանների ուսումնասիրությունն ու յուրաքանչյուր խցի քնելու տեղերի քանակը ցույց տվեցին, որ յուրաքանչյուր անձի համար Օրենքով [Չերբակաված և կալանավորված անձանց պահելու մասին] նախատեսված 2.5քմ նվազագույն տարածք ապահովելու պահանջը պահպանվել էր քրեական գործերով կասկածյալների մասով: Սակայն ԽԿԿ-ն պետք է ավելացնի, որ այս նվազագույն չափանիշը շատ ցածր է: Ինչ վերաբերում է վարչական կալանք կրող անձանց խցերին, այցի ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը ցույց տվեց, որ պայմանները կարող էին դառնալ չափազանց նեղված, օրինակ՝ 9քմ մակերեսով խցում մինչև 6 կալանավոր Հրագրանում և Սևանում:

Այցելած բոլոր ժամանակավոր պահման վայրերն ունեին խցերի լուսավորման և օդափոխման խնդիրներ: Բացառությամբ Հրագրանի ժամանակավոր պահման վայրի, բնական լույսից օգտվելու հնարավորությունը փոքր էր (փոքր պատուհաններ՝ որոշ դեպքերում շերտավարագույրներով ծածկված, ինչպես Երևանում,) կամ բացակայում էր (օրինակ, Ախուրյանում): Արհեստական լուսավորումը ամենուրեք թույլ էր, իսկ որոշ խցեր գրեթե մթության մեջ էին ընկղմված (օրինակ, Երևանում, Ախուրյանում և Մարալիկում): Ինչ վերաբերում է օդափոխությանը, ապա Երևանում և Սևանում այն բարելավման ակնկալիքի տեղիք էր տալիս:

Ինչ վերաբերում է ժամանակավոր պահման վայրերի բարեկարգությանն ու հիգիենային, այն բավականին ընդունելի էր Ներքին գործերի նախարարության Հրագրանի բաժնում և շատ վատ Սևանում գտնվող հաստատությունում: Երևանի ժամանակավոր ժամանակավոր պահման վայրի խցերը բավականաչափ լավ նորոգված էին, սակայն դրանց մաքրության մակարդակն ավելին էր պահանջում: Ախուրյանում և Մարալիկում գտնվող ժամանակավոր պահման վայրերը բարեկարգ չէին, բայց մաքուր էին:

46. Խցերը կահավորված էին մահճակալներով կամ քնելու փայտյա հարմարանքներով: Պատվիրակությունը նկատեց, որ այցելած բոլոր ժամանակավոր պահման վայրերում ներքնակներ, սավաններ, բարձեր և վերմակներ տրամադրվել էին միայն քրեական հանցագործություններով կասկածյալներին, սակայն դա չէր կատարվել վարչական կալանավորների դեպքում:

Պատվիրակությունը չէր ստացել գուգարանից օգտվելու հնարավորության վերաբերյալ որևէ բողոք այն անձանցից, որոնք կալանավորված էին կամ վերջերս կալանքի տակ էին պահվել այցելած ժամանակավոր պահման վայրերում: Այդուհանդերձ, Ներքին գործերի նախարարության Հրագրանի բաժնի ակնառու բացառությամբ ընդհանուր օգտագործման գուգարանը և լվացվելու հարմարությունները գտնվում էին քարուքանդ վիճակում և կեղտոտ էին:

Երևանի և Հրագրանի հաստատություններն ունեին լողանալու հարմարություններ, որոնք կարող էին օգտագործվել նոր ժամանած կալանավորների կողմից (բուժակի/բժշկի ցուցման համաձայն) և այն վարչական կալանավորների կողմից, որոնք համապատասխան հաստատություններում պահվում էին մեկ շաբաթից ավելի երկար ժամկետով: Երկու ժամանակավոր պահման վայրերում էլ ցնցուղային հարմարությունները ընդունելի աստիճանի բարեկարգ ու մաքուր էին և տաք ջուրն ապահովված էր: Այդուհանդերձ, միակ անձնական հիգիենայի պարագան, որը բաժանվում էր կալանավորներին, մի փոքր կտոր օճառն էր:

47. Ոստիկանության ծառայողների կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն այցելված ժամանակավոր պահման վայրերի մեծամասնությունում կալանավորներին օրը երեք անգամ տրվում էր սնունդ՝ ներառյալ մեկ տաք ուտեստ: Սակայն դա այդպես չէր Ներքին գործերի նախարարության Սևանի բաժնում, որտեղ սնունդ էր տրամադրվում օրը միայն մեկ անգամ՝ այս նպատակի համար նախատեսված սահմանափակ բյուջեի պատճառաբանությամբ (320 հայկական դրամ՝ այսինքն օրական ընդամենը 50 ցենտ յուրաքանչյուր կալանավորի համար): Նման պարագայում սննդի ապահովումը մեծամասամբ իրականացվում էր կալանավորների ընտանիքների կողմից: Ընտանեկան կապեր չունեցող կալանավորները սննդի ապահովման առումով ստիպված էին ապավինել այլ կալանավորների կամ ոստիկանության առանձին ծառայողների մեծահոգությանը:

48. Այցելած բոլոր ժամանակավոր պահման վայրերն ունեին դրսում զբոսանքի համար նախատեսված տարածքներ, որտեղ կալանավորներին թույլատրվում էր զբոսնել օրը մեկ ժամ (կանանց և անչափահասների դեպքում՝ օրը երկու ժամ): Սակայն Ներքին գործերի նախարարության Երևանում գտնվող ժամանակավոր պահման վայրում պատվիրակությունը տեղեկացավ, որ կալանավորները կարող էին որպես պատիժ զրկվել դրսում զբոսանքից ժամանակավոր պահման վայրի ներքին կանոնակարգը խախտելու համար:

49. ԽԿԿ-ն առաջարկում է, որ Հայաստանի իշխանությունները ժամանակավոր պահման վայրերում, որպեսզի.

- ապահովվի, որ բոլոր կալանավորներին տրամադրվել է բավարար բնակելի տարածք՝ նպատակը պետք է լինի յուրաքանչյուր անձի համար նվազագույնը 4քմ,
- ապահովվի խցերի բավականաչափ լուսավորում (ներառյալ բնական լույսի մատչելիություն) և օդափոխում,
- խցերը և ընդհանուր օգտագործման սանիտարական հարմարությունները պահվեն բավարար չափով նորոգված և հիգիենայի պահանջներին համապատասխան վիճակում,
- ապահովվի, որ բոլոր կալանավորներին (ներառյալ նրանց, որոնք պահվում են վարչական իրավախախտումներ կատարելու համար) գիշերվա համար տրամադրվեն ներքնակներ և վերմակներ,
- ապահովվի, որ վարչական կալանավորները հնարավորություն ունեն տաք ցնցուղ ընդունել նվազագույնը շաբաթը մեկ անգամ կալանքի կրման ժամկետի ընթացքում,
- ապահովվի, որ բոլոր կալանավորներին սնվելու ընդունված ժամերին տրամադրվում է բավարար քանակի և որակի սնունդ,
- վերջ տրվի որպես կարգապահական պատիժ դրսում զբոսնելու հնարավորությունից զրկելուն:»

### **Բ. ԽԿԿ գեկույցը 2004թ. Հայաստան կատարած այցի վերաբերյալ- CPT/Inf(2006)38**

33. Ձեկույցի համապատասխան մասերը սահմանում են հետևյալը.

«4. Կալանքի պայմանները

ա. Ներքին գործերի նախարարության Երևան քաղաքի ժամանակավոր պահման վայր

20. Այս հաստատության կալանքի պայմանները հիմնականում նույնն էին, ինչ 2002թ. կատարված այցի ժամանակ արձանագրվածները, այսինքն՝ վատ: Գրական փոփոխություն էր այն, որ վարչական կալանք կրող անձանց այժմ տրամադրվում էր անկողին (ՀՀ ոստիկանության պետի 2003թ. օգոստոսի 11-ի թիվ 8 հրամանի համաձայն): Բացի այդ, պատվիրակությունը տեղեկացվեց, որ կալանավորների սննդին հատկացվող գումարը մեծացվել էր 2003թ. մայիսին ընդունված Կառավարության որոշման համաձայն: Այլապես նախորդ այցից հետո վերակառուցման կամ մեծածավալ նորոգման աշխատանք չէր իրականացվել:

Հետևաբար, ԽԿԿ-ն կրկնում է 2002թ. կատարված այցի վերաբերյալ զեկույցի 49-րդ պարբերությունում նշված իր առաջարկությունները՝ մասնավորապես բնակելի տարածքի, խցերի լուսավորման և օդափոխման, նորոգման և հիգիենայի պահպանման վերաբերյալ:»

#### **Գ. ԽԿԿ զեկույցը 2006թ. Հայաստան կատարած այցի վերաբերյալ- CPT/Inf(2007)47**

34. Ձեկույցի համապատասխան մասերը սահմանում են հետևյալը.

«4. Կալանքի պայմանները

ա. ոստիկանության պահման վայրերը

28. 2006թ. կատարած այցի սկզբում պատվիրակությունը տեղեկացվեց, որ 2004թ. դեկտեմբերի 28-ին ընդունված Հայաստանի Հանրապետության Նախագահի ՆԿ-328-ՆԳ հրամանագրի համաձայն վերակառուցման մեծածավալ ծրագիր էր նախաձեռնվել ոստիկանական պահման վայրերում: ԽԿԿ-ն ողջունում է սա: Պետք է նշել նաև, որ [Չերքակալված և կալանավորված անձանց պահելու մասին] ՀՀ օրենքի վերջերս կատարված փոփոխությամբ ոստիկանական պահման վայրերում յուրաքանչյուր անձին տրամադրվող ապրելու տարածքի պաշտոնական նվազագույն չափանիշ սահմանվեց 4քմ-ը: Սա կարող է ընդունելի համարվել բազմամարդ խցերի դեպքում, սակայն 4քմ-ը բավարար չափ չէ մեկ մարդու համար նախատեսված խցի համար:

29. Այցի ընթացքում պատվիրակությունը կարող էր նշմարել վերը նշված ծրագրի արդյունքը: Ոստիկանական պահման վայրերից մի քանիսը (օրինակ, Չարենցավանում, Գավառում և Հրազդանում) դեռևս վերակառուցման գործընթացում էին և շուտով պետք է վերաբացվեին: Ինչ վերաբերում է արդեն իսկ վերակառուցված արգելանքի վայրերին, դրանց պայմաններն ընդհանուր բարձր մակարդակի էին:»

### **ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐՑԵՐ**

#### **I. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 3-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ**

35. Դիմումատուն բողոք է ներկայացրել առ այն, որ իր կալանքի պայմանները չեն համապատասխանել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի պահանջներին, որը սահմանում է հետևյալը.

«Ոչ որ չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:»

### **Ա. Ընդունելիությունը**

36. Կառավարությունը պնդեց, որ դիմումատուն չի սպառել իրավական պաշտպանության ներպետական միջոցները: Նա անարգել կարող էր բողոքել կալանքի պայմանների դեմ «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի հիման վրա, ինչը նա հաջողությամբ իրականացրել էր 2003թ. մարտի 23-ին: Այդուհանդերձ, դիմումատուն չէր բողոքել իր կալանքի պայմանների վերաբերյալ 2003թ. մարտի 25-ին նոր և ավելի լավ խուց տեղափոխվելուց հետո չնայած այն հանգամանքին, որ իր նախորդ բողոքը այդ կապակցությամբ արդյունավետ էր եղել:

37. Դիմումատուն պնդեց, որ իր տեղափոխված երկրորդ խցի պայմանները շատ նման էին առաջին խցի պայմաններին: Նման պարագայում 2003թ. մարտի 23-ի նրա բողոքն իրականում անարդյունավետ էր և իրատեսական չէր լինի հետագա բողոքարկման արդյունքում որևէ բարելավում ակնկալել:

38. Դատարանը գտնում է, որ ենթադրյալ չսպառնան վերաբերյալ Կառավարության առարկությունը սերտորեն կապված է 3-րդ հոդվածի ներքո դիմումատուի ներկայացրած գանգատի բովանդակության հետ և պետք է միացվի գանգատի ըստ էության քննությանը:

39. Դատարանը նշում է, որ այս գանգատն ակնհայտորեն անհիմն չէ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով: Դատարանն այնուհետև նշում է, որ այն անընդունելի չէ որևէ այլ հիմքով: Հետևաբար այն պետք է ճանաչվի ընդունելի:

### **Բ. Ըստ էության քննությունը**

40. Կառավարությունը պնդել է, որ 3-րդ հոդվածի պահանջների խախտում տեղի չի ունեցել: Դիմումատուն որևէ փաստարկներ չէր ներկայացրել իր հոգեկան կամ ֆիզիկական առողջությանը վնաս պատճառվելու կապակցությամբ: Ավելին, նա տեղափոխվել էր մեկ այլ, ավելի հարմարավետ խուց 2003թ. մարտի 23-ին բողոք ներկայացնելուց հետո: Վերջապես, իշխանությունները մտադրություն չէին ունեցել վիրավորել կամ նվաստացնել դիմումատուին: Կառավարությունը նաև ավելացրեց, որ չնայած գոյություն ունեցող սոցիալ-տնտեսական խնդիրներին, Հայաստանի քրեակատարողական համակարգում կատարվել էին էական բարեփոխումներ և՛ ընդհանուր պայմանների և՛ կիրառվող ռեժիմի տեսանկյունից:

41. Դիմումատուն պնդեց, որ Արմավիրի ժամանակավոր պահման վայրում իր կալանքի պայմանները հավասարազոր էին նվաստացնող վերաբերմունքի 3-րդ հոդվածի իմաստով:

42. Դատարանը նախ և առաջ դիտարկում է, որ 3-րդ հոդվածը սահմանում է ժողովրդավարական հասարակության հիմնարար արժեքներից մեկը: Այն բացարձակապես արգելում է խոշտանգումը կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը անկախ տուժողի վարքագծից (տե՛ս այլ գործերի շարքում *Լաբիտան ընդդեմ Իտալիայի* [ՄՊ] (*Labita v. Italy*) թիվ 26772/95, պարբ. 119, ՄԻԵԴ 2000-IV):

43. Դատարանի նախադեպային իրավունքի համաձայն վատ վերաբերմունքը պետք է հասնի խստության որոշակի նվազագույն աստիճանի, որպեսզի այն ընդգրկվի 3-րդ հոդվածի կիրառման ոլորտում: Գործնականում այս նվազագույն շեմի գնահատումը հարաբերական է՝ այն կախված է գործի բոլոր հանգամանքներից, ինչպիսիք են վերաբերմունքի կամ պատժի բնույթն ու իրավիճակը, վերջինիս ի կատար ածման եղանակն ու մեթոդը, տևողությունը, ֆիզիկական և հոգեկան հետևանքները և, որոշ դեպքերում, տուժողի սեռը, տարիքը և առողջական վիճակը (տե՛ս այլ գործերի շարքում *Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության* (*Ireland v. the United Kingdom*), 1978թ. հունվարի 18-ի վճիռը, Սերիա Ա, թիվ 25, էջ 65, պարբ. 162):

44. Դատարանի կողմից վերաբերմունքը համարվել է «նվաստացնող», որովհետև այն իր գոհերի մոտ առաջացրել էր վախի, տառապանքի և նվաստացման զգացում, ինչը կարող էր վիրավորել և ստորացնել նրանց (տե՛ս *Կուդլան ընդդեմ Լեհաստանի* [ՄՊ] (*Kudla v. Poland*), թիվ 30210/96, պարբ. 92, ՄԻԵԴ 2000-XI): Ավելին, որոշելիս վերաբերմունքի տվյալ տեսակը Կոնվենցիայի 3-րդ հոդվածի իմաստով «նվաստացնող» է թե ոչ, Դատարանը հաշվի է առնում թե արդյոք վերջինիս նպատակը տվյալ անձին վիրավորելն ու նվաստացնելն է և արդյոք առաջացած հետևանքների առումով այն հետագայում ազդեցություն է ունեցել նրա անձի վրա 3-րդ հոդվածին հակառակ (տե՛ս *Ռանինենն ընդդեմ Ֆինլանդիայի* (*Raninen v. Finland*) 1997թ. դեկտեմբերի 16-ի վճիռը, *Վճիռների և որոշումների տեղեկագիր* 1997-VIII, էջեր 2821-22, պարբ. 55): Այդուհանդերձ, նման նպատակի բացակայությունը չի կարող ամբողջովին բացառել 3-րդ հոդվածի խախտման ճանաչումը (տե՛ս օրինակ *Փիերսն ընդդեմ Հունաստանի* (*Peers v. Greece*), թիվ 28524/95, պարբ. 74, ՄԻԵԴ 2001-III): Որպեսզի պատիժը կամ վերջինիս հետ կապված վերաբերմունքը լինի «նվաստացնող», կրած տառապանքը կամ վիրավորանքը պետք է ցանկացած պարագայում ավելին լինի, քան տառապանքի կամ վիրավորանքի այն անխուսափելի չափը, որը կապված է իրավաչափ վերաբերմունքի կամ պատժի հետ (տե՛ս *Վ.-ն ընդդեմ Մեծ Բրիտանիայի* [ՄՊ] (*V v. the United Kingdom*), թիվ 24888/94, պարբ. 71, ՄԻԵԴ 1999-IX):

45. Անձին ազատությունից զրկելու միջոցները կարող են հաճախ նման տարրեր պարունակել: Այդուհանդերձ, պետության պարտավորությունն է ապահովել, որ անձը պահվի այնպիսի պայմաններում, որոնք համապատասխանում են վերջինիս մարդկային արժանապատվության հարգմանը, որ տվյալ միջոցի իրականացման եղանակն ու մեթոդը նրան

չեն պատճառում ավելի մեծ տառապանք և դժվարություն, քան կալանքի հետ կապված տառապանքի անխուսափելի սահմանը և, որ, հաշվի առնելով ազատագրկման գործնական անհրաժեշտությունը, նրա առողջությունն ու բարեկեցությունը բավականաչափ ապահովված են (տե՛ս *Կալաշնիկովն ընդդեմ Ռուսաստանի (Kalashnikov v. Russia)*, թիվ 47095/99, պարբ. 95, ՄԻԵԴ 2002-VI): Կալանքի պայմանները գնահատելիս պետք է հաշվի առնվի այդ պայմանների հանրագումարային ազդեցությունը, ինչպես նաև դիմումատուի առանձնահատուկ պնդումները (տե՛ս *Դուգոզն ընդդեմ Հունաստանի (Dougoz v. Greece)*, թիվ 40907/98, պարբ. 46, ՄԻԵԴ 2001-II):

46. Սույն գործում դիմումատուն կալանավորված է եղել ընդհանուր տաս օր ժամկետով: Սկզբնապես նա գրեթե երեք օր պահվել է յոթ այլ անձանց հետ միասին 8.75 քմ մակերեսով խցում. այլ կերպ ասած՝ նրան տրամադրվել էր 1.1 քմ անձնական օգտագործման տարածք: Այս առումով դիմումատուի վիճակը կարող էր համեմատվել *Կալաշնիկովի* գործում դիմումատուի վիճակի հետ, որտեղ դիմումատուի ազատությունը սահմանափակվել էր 0.9-1.9 քմ տարածքում: Այդ գործում Դատարանը գտավ, որ բնակեցվածության մնան խիտ աստիճանն ինքնին խնդիր էր առաջացնում Կոնվենցիայի 3-րդ հոդվածի տեսանկյունից (տե՛ս վերը նշված *Կալաշնիկովը*, պարբ. 96-97): Ավելին, խուցը լի էր մակարույծներով, կար բնական լույսի պակաս և որպես այդպիսին չկային քնելու հարմարություններ:

47. Դատարանը նշում է, որ իր կալանավորման չորրորդ օրը դիմումատուն տեղափոխվել է այլ խուց, որը հանգեցրել է իր կալանքի պայմանների թեթևակի բարելավման զբաղեցվածության տեսանկյունից. նոր խուցը, որը նախկինի մակերեսն ուներ, նա կիսում էր չորս այլ անձանց հետ, ինչի հետևանքով դիմումատուին թողնվում էր 2.2 քմ անձնական տարածք: Նույնիսկ այս դեպքում նշված տարածքը էականորեն ավելի փոքր էր, քան այն 4 քմ տարածքը, որը ԽԿԿ չափանիշների համաձայն բազմամարդ խցի մեկ բանտարկյալի համար նախատեսված նվազագույն պահանջն է (տե՛ս ԽԿԿ համապատասխան հաշվետվությունները, պարբ. 32-34) և նույնիսկ ավելի փոքր էր, քան տվյալ ժամանակահատվածում ուժի մեջ գտնվող ներպետական օրենսդրությամբ պահանջվող նվազագույն 2.5 քմ-ը: Ոչինչ չի վկայում այն մասին, որ մեկ կամ մյուս գործում դիմումատուին թույլատրվել են խցից դուրս որևէ գործողություններ, որոնք կարող էին փոխհատուցել տարածքի խիստ պակասը (տե՛ս *Յենբաուերն ընդդեմ Խորվաթիայի (Cenbauer v. Croatia)*, թիվ 73786/01, պարբ. 49, ՄԻԵԴ 2006-III, *Մալեչկովն ընդդեմ Բուլղարիայի (Malechkov v. Bulgaria)*, թիվ 57830/00, պարբ. 141, 2007թ. հունիսի 28, և դրան հակառակ, *Նուրմագոմեդովն ընդդեմ Ռուսաստանի* (որոշում) (*Nurmagomedov v. Russia*), թիվ 30138/02, 2004թ. սեպտեմբերի 16): Ավելին, մինչդեռ երկրորդ խցում մահճակալներ կային, դրանք քանակով բանտարկյալների քանակի կեսն էին կազմում, ինչը ստիպում էր բանտարկյալներին հերթով քնել: Բացի այդ, որևէ սպիտակեղեն կամ

վերմակներ չէին տրամադրվել: Քնելու պայմանները նաև առավել դժվարացել էին խցում մշտական արհեստական լուսավորման պատճառով: Խուցը նույնությամբ լի էր մակաբույծներով և միջատներով և կար բնական լույսի պակաս:

48. Դատարանն այնուհետև նշում է, որ ժամանակավոր պահման վայրում գտնվելու ընթացքում դիմումատուին երբևէ չի թույլատրվել անարգել օգտվել զուգարանից՝ նրան թույլատրվում էր օգտվել զուգարանից սահմանված ժամերին: Ավելին, զուգարանը հակասանիտարական վիճակում էր: Բացի այդ, նրան խմելու ջուր կամ սնունդ չէր տրամադրվում մինչև նա չէր համաձայնում վճարել վարչակազմին: Դատարանը կրկնում է, որ անընդունելի է անձին կալանքի տակ պահել այնպիսի պայմաններում, որտեղ չեն ապահովվում վերջինիս տարրական կարիքները (տե՛ս, *mutatis mutandis*, *Ռիադն ու Իդիաբն ընդդեմ Բելգիայի (Riad and Idiab v. Belgium)*, թիվ 29787/03 և 29810/03, պարբ. 106, ՄԻԵԴ 2008 (քաղվածքներ), և *Շեքետն ընդդեմ Ռուսաստանի (Shchebet v. Russia)*, թիվ 16074/07, պարբ. 93, 2008թ. հունիսի 12):

49. Դատարանը նշում է, որ Կառավարությունը չի վիճարկել դիմումատուի կողմից կատարված կալանքի պայմանների ներկայացումը (տե՛ս վերոնշյալ 23-րդ և 25-րդ պարբերությունները): Այն նաև նշում է, որ դիմումատուի նկարագրությունը մեծամասամբ համապատասխանում է ԽԿԿ-ի եզրահանգումներին, որը 2002թ. Հայաստան կատարած այցի ժամանակ ստուգել է ոստիկանության մի շարք ժամանակավոր պահման վայրեր, որտեղ պահվում էին վարչական կալանավորները (տե՛ս Դատարանի կողմից ԽԿԿ-ի հաշվետվությունները հիմք ընդունելու այլ օրինակներ *Կեհայովն ընդդեմ Բուլղարիայի (Kehayov v. Bulgaria)*, թիվ 41035/98, պարբ. 66, 2005թ. հունվարի 18, և *Օստրովարն ընդդեմ Մոլդովայի (Ostrovar v. Moldova)*, թիվ 35207/03, պարբ. 80, 2005թ. սեպտեմբերի 13): Նույնիսկ եթե այս այցը նախորդել է սույն գործի հանգամանքներին, ԽԿԿ-ի նյութերից երևում է, որ այս ոլորտում էական բարելավումներ տեղի չեն ունեցել մինչև 2004թ. դեկտեմբերին լայնածավալ բարեփոխումների ծրագիր սկսելը: Հետևաբար Դատարանը որևէ պատճառ չունի դիմումատուի պնդումների ճշմարտացիությունը կասկածի տակ դնելու համար:

50. Դատարանը նշում է նաև, որ դիմումատուի կալանքի ժամկետը հարաբերականորեն կարճ էր՝ տևելով ընդհանուր տաս օր: Այդուհանդերձ, Դատարանը նկատի է առնում, որ դրան համեմատելի և նույնիսկ շատ ավելի կարճ տևողությամբ կալանքի պայմանները նախկինում համարվել են 3-րդ հոդվածի պահանջներին հակասող (տե՛ս վերոնշյալ *Ռիադն ու Իդիաբը*, պարբ. 100-11, որտեղ դիմումատուները կալանքի տակ էին պահվել տասնհինգ և տասնմեկ օր, և *Ֆեդոտովն ընդդեմ Ռուսաստանի (Fedotov v. Russia)*, թիվ 5140/02, պարբ. 66-70, 2005թ. հոկտեմբերի 25, որտեղ դիմումատուն կալանքի տակ էր գտնվել քսաներկու ժամ առանց սննդի կամ ջրի կամ զուգարանից օգտվելու): Այդ պատճառով, չնայած նրան, որ կալանքի տևողությունը կարող է հաշվի առնվել կալանքի

պայմանների անբավարարությամբ դիմումատուին պատճառված տառապանքի կամ նվաստացման ծանրության աստիճանը գնահատելիս (տե՛ս օրինակ վերոնշյալ *Կալաշնիկով*, պարբ. 102, և վերոնշյալ *Դուզոզ*, պարբ. 48), այդ տևողության հարաբերական կարճ լինելն ինքնին չի բացառում բողոքարկվող վերաբերմունքը 3-րդ հոդվածի գործողության շրջանակից, եթե մյուս բոլոր տարրերը բավարար են այն քննարկվող նորմի կիրառման ոլորտում ընդգրկելու համար:

51. Նույնը կիրառելի է Կառավարության այն առարկության նկատմամբ, որ դիմումատուի կալանքի պայմանները վնասակար ազդեցություն չեն ունեցել նրա առողջության վրա: Դատարանը գտնում է, որ չնայած կալանավորված անձի առողջությանը կալանքի պայմանների հետևանքով պատճառված վնասի առկայությունը կարող է հաշվի առնվել (տե՛ս օրինակ *Լաբզովն ընդդեմ Ռուսաստանի*, թիվ 62208/00, պարբ. 47, 2005թ. հունիսի 16), նման հետևանքների գոյությունը ոչ մի դեպքում նախապայման չէ 3-րդ հոդվածի խախտման ճանաչման համար (տե՛ս օրինակ վերոնշյալ *Դուզոզ*, պարբ. 45-49, վերոնշյալ *Յենքաուեր*, պարբ. 45-53, վերոնշյալ *Շեքետ*, պարբ. 86-96, և վերոնշյալ *Ֆերտով*, պարբ. 66-70):

52. Այս հիմքով և, հաշվի առնելով վերոնշյալ նկարագրության համաձայն դիմումատուի կալանքի պայմանների ընդհանուր ազդեցությունը, Դատարանը գտնում է, որ դիմումատուի կրած դժվարությունները գերազանցել են այն անխուսափելի սահմանը, որը գործում է կալանքի դեպքում և եզրակացնում է, որ դրա արդյունքում առաջացած տառապանքն ու վիրավորանքի ու նվաստացման զգացումները գերազանցել են Կոնվենցիայի 3-րդ հոդվածի ներքո նախատեսվող խստության թույլատրելի սահմանը:

53. Ինչ վերաբերում է Կառավարության այն պնդմանը, որ իշխանությունները մտադրություն չեն ունեցել նվաստացնել նրան, ինչպես արդեն վերը նշվեց, զոհին վիրավորելու կամ նվաստացնելու նպատակի բացակայությունը չի կարող բացառել 3-րդ հոդվածի խախտման ճանաչումը (տե՛ս վերը՝ պարբ. 44): Դատարանն այսպիսով եզրակացնում է, որ դիմումատուի կալանքի պայմանները հանդիսացել են նվաստացնող վերաբերմունք 3-րդ հոդվածի իմաստով:

54. Գալով այս եզրահանգմանը՝ Դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ ենթադրյալ չսպառման վերաբերյալ Կառավարության առարկությանը:

55. Դատարանը կրկնում է, որ սպառման ենթակա են միայն այն ներպետական միջոցները, որոնք արդյունավետ են: Իրավական պաշտպանության ներպետական միջոցների չսպառում պնդող Կառավարության պարտավորությունն է Դատարանին ապացուցել, որ իր կողմից նշված միջոցն արդյունավետ էր, տեսականորեն և գործնականում մատչելի էր քննարկվող ժամանակահատվածում՝ այսինքն, այն հասանելի էր, կարող էր հատուցում տրամադրել դիմումատուի գանգատների դիմաց և առաջարկում էր հաջողության իրատեսական հնարավորություն:

Ապացուցման այս պարտավորությունը կատարելու դեպքում դիմումատուի պարտավորությունն է ցույց տալ, որ Կառավարության կողմից առաջարկվող միջոցն իրականում սպառվել է կամ որ այն ինչ-ինչ պատճառներով անբավարար կամ անարդյունավետ էր գործի որոշակի հանգամանքներում կամ որ առկա էին առանձնահատուկ հանգամանքներ, որոնք վերջինիս ազատում էին այս պահանջի կատարումից (տե՛ս *Կալաշնիկովն ընդդեմ Ռուսաստանի* (որոշում) (*Kalashnikov v. Russia*), թիվ 47095/99, 2001թ. սեպտեմբերի 18, և *Մելնիկն ընդդեմ Ուկրաինայի* (*Melnik v. Ukraine*), թիվ 72286/01, պարբ. 67, 2006թ. մարտի 28):

56. Դատարանն այնուհետև ընդգծում է, որ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի առաջին մասը պետք է կիրառվի որոշակի աստիճանի ճկունությամբ և առանց ավելորդ ֆորմալիզմի: Ավելին, ներպետական միջոցների սպառման կանոնը ո՛չ բացարձակ է, և ո՛չ էլ կարող է մեխանիկորեն կիրառվել: Ստուգելիս, թե արդյոք կանոնը պահպանվել է թե ոչ շատ կարևոր է նկատի առնել տվյալ պետության իրավական համակարգում պաշտոնական միջոցների գոյությունը, այն ընդհանուր իրավական և քաղաքական դաշտը, որում դրանք գործում են, ինչպես նաև գործի առանձնահատուկ հանգամանքները և այն, թե արդյոք դիմումատուն կատարել է այն ամենն, ինչը կարող էր խելամտորեն ակնկալվել:

57. Համաձայն Կառավարության սույն գործում դիմումատուն իր տրամադրության տակ ուներ իրավական պաշտպանության միջոց, մասնավորապես՝ նա կարող էր բողոք ներկայացնել «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի հիման վրա, ինչը նա չէր կատարել երկրորդ խուց տեղափոխվելուց հետո: Կառավարությունը պնդում էր, որ սա արդյունավետ պաշտպանության միջոց էր՝ հիմնվելով դիմումատուի՝ 2003թ. մարտի 23-ի դիմումի առաջացրած արդյունքների վրա:

58. Դատարանը, սակայն, ուշադրության կենտրոնում է պահում վերոնշյալ իր եզրահանգումն այն մասին, որ երկրորդ խուց դիմումատուին փոխադրելը առաջացրել էր դիմումատուի կալանքի պայմանների չնչին, եթե այդպիսին ընդհանրապես կար, բարելավում: Հետևաբար, հակառակ Կառավարության պնդմանը, դիմումատուի՝ 2003թ. մարտի 23-ի դիմումը բավարար և արդյունավետ արդյունք չէր ունեցել: Դատարանն այնուհետև նկատում է, որ Կառավարությունը չէր ներկայացրել որևէ այլ ապացույց հիմնավորելու համար իր կողմից մատնանշվող իրավական պաշտպանության միջոցի արդյունավետությունը: Այն նույնիսկ չէր մասնավորեցրել, թե այդ հոդվածում թվարկված մի շարք մարմիններից որ մեկին պետք է դիմեր դիմումատուն և ինչպիսի առանձնահատուկ միջոցներ կարող էին ձեռնարկվել նրանց կողմից դիմումատուի բողոքները բավարարելու համար՝ հատկապես հաշվի առնելով, որ դիմումատուի կողմից բարձրացված խնդիրներն ակնհայտորեն համակարգային բնույթ ունեին և միայն չէին վերաբերում դիմումատուի անձնական կացությանը

(տե՛ս վերը, պարբ. 32-34): Այդ պատճառով չսպառնան վերաբերյալ Կառավարության առարկությունը պետք է մերժվի:

59. Հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում:

## II. ԳԻՄՈՒՄԱՏՈՒԻ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 5-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

60. Գիմումատուն բողոք է ներկայացրել այն մասին, որ նա չէր տեղեկացվել իր ձերբակալման փաստական և իրավական հիմքերի մասին: Նա վկայակոչում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 2-րդ մասը, որը սահմանում է հետևյալը.

«2. Յուրաքանչյուր ձերբակալված իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է իր ձերբակալման պատճառների և ներկայացվող ցանկացած մեղադրանքի մասին:»

### Ընդունելիություն

61. Կառավարությունը պնդեց, որ դիմումատուն ոստիկանության ծառայողների կողմից տեղեկացվել էր իր ձերբակալման պատճառների մասին: Ավելին, ոստիկանության բաժին հասնելուն պես ձերբակալության և վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություններ են կազմվել, որտեղ նշված էին դիմումատուի ձերբակալության պատճառները: Այս արձանագրությունները ստորագրվել են դիմումատուի կողմից: Այդ պատճառով էլ դիմումատուն անհապաղ տեղեկացվել է իր ձերբակալության պատճառների մասին և նրա կողմից այս փաստը ժխտելը գործի նյութերով չի հիմնավորվել:

62. Գիմումատուն պնդեց, որ նա երբեք չի տեղեկացվել իր ձերբակալության իրավական կամ փաստական հիմքերի մասին:

63. Դատարանը կրկնում է որ 5-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է այն տարրական երաշխիքը, որ յուրաքանչյուր ձերբակալված անձ պետք է իմանա, թե ինչու է նա ազատությունից զրկվել: Այս դրույթը 5-րդ հոդվածով նախատեսված պաշտպանության մեխանիզմի բաղկացուցիչ մասն է՝ 2-րդ մասի համաձայն յուրաքանչյուր ձերբակալված անձ պետք է պարզ, ոչ տեխնիկական իրեն հասկանալի լեզվով տեղեկացվի իր ձերբակալության հիմնական իրավական և փաստական հիմքերի մասին, որպեսզի նա ունակ լինի նպատակահարմարությունից ելնելով դիմել դատարան 4-րդ մասի համաձայն դրա օրինականությունը վիճարկելու համար: Այս տեղեկատվությունը պետք է հաղորդվի «անհապաղ», սակայն պարտադիր չէ, որ այն ամբողջությամբ բացահայտվի ձերբակալությունն իրականացնող ոստիկանի կողմից անմիջապես ձերբակալման պահին: Այն հարցը, թե արդյոք հաղորդված տեղեկատվության բովանդակությունը և անհապաղությունը բավարար էին թե ոչ, որոշվում է յուրաքանչյուր

գործի առանձնահատուկ հանգամանքներին համապատասխան (տե՛ս *Ֆոքսը, Բենմիքելը և Հարթլին ընդդեմ Միացյալ Թագավորության (Fox, Campbell and Hartley v. the United Kingdom)*, 1990թ. օգոստոսի 30-ի վճիռը, Շարք Ա թիվ 182, էջ 19, պարբ. 40, և *Մյուրեյն ընդդեմ Միացյալ Թագավորության (Murray v. the United Kingdom)*, 1994թ. հոկտեմբերի 28-ի վճիռը, Շարք Ա թիվ 300-Ա, էջ 31, պարբ. 72):

64. Սույն գործում պարզ չէ, թե արդյոք ձերբակալության ժամանակ դիմումատուին հաղորդվել են որևէ պատճառներ ձերբակալությունն իրականացնող ոստիկանների կողմից, թե ոչ: Դատարանը նկատի է առնում, սակայն, որ դիմումատուի ձերբակալության և անմիջապես իրականացված քննության պատճառները նշված են եղել ձերբակալության և վարչական իրավախախտման արձանագրություններում: Երկու փաստաթղթերն էլ ստորագրված են եղել դիմումատուի կողմից: Դիմումատուի պնդումն այն մասին, որ նա հրաժարվել է ստորագրել վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը, որը նրան ենթադրաբար խնդրել են ստորագրել միայն դատաքննությունից հետո, գործի նյութերով չի հիմնավորվում: Ավելին, ոստիկանության բաժնում դիմումատուի կողմից գրված հայտարարությունից ակնհայտ է, որ նա տեղյակ էր, թե ինչու էր նա բերվել ոստիկանության բաժին: Նման պարագայում դիմումատուի հակառակ պնդումը գործի նյութերով չի հիմնավորվում:

65. Գանգատի այս մասը հետևաբար ակնհայտորեն անհիմն է և ենթակա է մերժման Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի համաձայն:

### III. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ԴԻՍՈՒՄԱՏՈՒԻ ԴԱՏԱՊԱՐՏՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՉՍՊԱՌՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

66. Կառավարությունը պնդեց, որ դիմումատուն չէր սպառել ներպետական միջոցները 2003թ. մարտի 22-ի որոշման հետ կապված՝ ՎԻՎՕ-ի 294-րդ հոդվածով սահմանված կարգով ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի նախագահին վերաքննիչ քողոք չներկայացնելով:

67. Դիմումատուն վիճարկեց Կառավարության առարկությունը:

68. Դատարանը նշում է, որ այն արդեն ուսումնասիրեն է այս խնդիրը և որոշել, որ ՎԻՎՕ-ի 294-րդ հոդվածով նախատեսված վերանայման հնարավորությունը Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով արդյունավետ միջոց չէր (տե՛ս վերոնշյալ *Գալստյանը*, պարբ. 42): Այդ պատճառով Կառավարության նախնական առարկությունը պետք է մերժվի:

### IV. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ ԴԻՍՈՒՄԱՏՈՒԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԼԱՆՔԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ

69. Գիմնումատուն, հիմնվելով Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 4-րդ մասերի վրա, բողոքել է իր վարչական կալանքի վերաբերյալ: 5-րդ հոդվածի համապատասխան հատվածները սահմանում են՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.

ա) անձին օրինական կերպով կալանքի տակ պահելը իրավասու դատարանի կողմից նրա դատապարտվելուց հետո,

բ) անձի օրինական ձերբակալումը կամ կալանավորումը դատարանի օրինական կարգադրությանը չենթարկվելու համար կամ օրենքով նախատեսված ցանկացած պարտավորության կատարումն ապահովելու նպատակով,

գ) անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար,

դ) անչափահասին կալանքի վերցնելը օրինական կարգադրության հիման վրա՝ դատախարակչական հսկողության համար, կամ նրա օրինական կալանավորումը՝ նրան իրավասու իրավական մարմնին ներկայացնելու նպատակով,

ե) անձանց օրինական կալանքի վերցնելը՝ վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու նպատակով, ինչպես նաև հոգեկան հիվանդներին, գինեմոլներին կամ թմրամոլներին կամ թափառաշրջիկներին օրինական կալանքի վերցնելը,

զ) անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ նրա անօրինական մուտքը երկիր կանխելու նպատակով, կամ այն անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը, որի դեմ միջոցներ են ձեռնարկվում՝ նրան արտաքսելու կամ հանձնելու նպատակով:

...

3. Սույն հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք...

4. Յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է»:

### **Ընդունելիություն**

70. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուի վարչական կալանքը համապատասխանել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի պահանջներին: Իր

գործը քննվել է առաջին ատյանի դատարանի կողմից, որը միակ իրավասու մարմինն է եղել դա կատարելու համար: Ինչ վերաբերում է 5-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դատական վերանայման հնարավորությանը, ապա այն նախատեսված է եղել առաջին ատյանի դատարանի որոշմամբ:

71. Գիմումատուն պնդել է, որ իր վարչական կալանքը կամայական է եղել և խախտել է 5-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված իր իրավունքները: Այնուհետև նա պնդել է, որ դատական քննությունը տեղի էր ունեցել 5-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված պահանջների խախտմամբ:

72. Գատարանը նշում է, որ իր կողմից արդեն քննվել է 5-րդ հոդվածի 1-ին մասի հետ կապված նմանատիպ գանգատ, որով գտել է, որ դիմումատուի դեմ վարչական կալանքը նշանակված է եղել 5-րդ հոդվածի 1-ին մասի ա) ենթակետի իմաստով «իրավասու դատարանի կողմից նրա դատապարտվելուց հետո» և օրենքով սահմանված կարգով (տե՛ս վերը մեջբերված *Գալստյան (Galstyan)*, պարբ. 47-49): Սույն գործով Գատարանը այդ մոտեցումից շեղվելու պատճառ չի տեսնում: Գատարանը նաև կրկնում է, որ 5-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված երաշխիքները գործում են միայն 5-րդ հոդվածի 1-ին մասի գ) ենթակետի համաձայն կալանքի դեպքում (տե՛ս *Յեսիուսը ընդդեմ Լիտվայի (Jecius v. Lithuania)*, թիվ 34578/97, պարբ. 75, ՄԻԵԳ 2000-IX): Դրանից հետևում է, որ այս դրույթով նախատեսված երաշխիքները կիրառելի չեն դիմումատուի վարչական կալանքի դեպքում, որը, ինչպես արդեն նշվել է, նշանակվել էր 5-րդ հոդվածի 1-ին մասի ա) ենթակետով: Վերջապես Գատարանը կրկնում է, որ այն դեպքերում, երբ ազատագրվման դատապարտումը նշանակվում է «իրավասու դատարանի կողմից դատապարտման» արդյունքում, ապա 5-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված վերանայման հնարավորությունը արդեն ներառված է այդ որոշման մեջ (տե՛ս վերը մեջբերված *Գալստյան (Galstyan)*, պարբ. 51): Այդուհանդերձ, ինչպես վերը նշվեց, սույն գործում որևէ խնդիր չի ծագում 5-րդ հոդվածի 1-ին մասի ա) ենթակետի հետ կապված:

73. Հետևաբար, գանգատի այս մասն ակնհայտորեն անհիմն է և ենթակա է մերժման համաձայն Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի:

## V. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

74. Գիմումատուն իր դեմ հարուցված վարչական վարույթի հետ կապված մի շարք բողոքներ է ներկայացրել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին և 3-րդ (ա)-(դ) կետերի հիման վրա, որոնք համապատասխանաբար սահմանում են հետևյալը.

«1. Յուրաքանչյուր ոք ... նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի ... անկախ ու անաչառ դատարանի կողմից... արդարացի ... դատաքննության իրավունք...

...

3. Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.

ա) իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին,

բ) բավարար ժամանակ ու հնարավորություններ՝ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար,

գ) պաշտպանելու իրեն անձամբ կամ իր ընտրած դատապաշտպանների միջոցով...

դ) հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, և իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու ու հարցաքննելու միևնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները ... »:

## **Ա. Ընդունելիություն**

75. Գատարանը նշում է, որ այս գանգատը Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով ակնհայտորեն անհիմն չէ: Այնուհետև այն նշում է, որ գանգատն անընդունելի չէ որևէ այլ հիմքով: Հետևաբար այն պետք է ճանաչվի ընդունելի:

## **Բ. Գործի ըստ էության քննությունը**

76. Կառավարությունը պնդել է, որ Դիմումատուն ունեցել է արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: Նա չի ներկայացրել որևէ ապացույց, որը կհիմնավորեր իր պնդումներն առ այն, որ դատավորն անաչառ չի եղել: Դիմումատուն վկաներ կանչելու, ապացույցներ ներկայացնելու, բողոքներ և միջնորդություններ անելու հնարավորություն է ունեցել, որից չի օգտվել: Գատավորն առաջարկել էր դիմումատուին օգտվել փաստաբան ունենալու իր իրավունքից, որից վերջինս հրաժարվել է: Դիմումատուի այն փաստարկը, որ իր նկատմամբ հարուցված վարչական գործի նյութերն իրեն չէին տրամադրվել դատարանի նիստից առաջ, գործի նյութերով հիմնավորված չէ՝ և՛ արձանագրությունը ձերբակալության վերաբերյալ և՛ վարչական իրավախախտման արձանագրությունը ստորագրվել էին դիմումատուի կողմից նրան ոստիկանության բաժին բերելուց հետո: Այսպիսով, հաշվի առնելով, որ դիմումատուն ստորագրել էր վարչական իրավախախտման արձանագրությունն առանց որևէ առարկության, հրաժարվել էր փաստաբան ունենալուց, որևէ միջնորդություն չէր ներկայացրել և չէր

օգտվել այլ դատավարական իրավունքներից, ոստիկանության ծառայողները համարել էին, որ երկու ժամը բավարար ժամանակ էր դիմումատուի կողմից իր պաշտպանությունը նախապատրաստելու համար:

77. Գիմումատուն պնդել է, որ դատաքննությունն արդարացի չի եղել, և որ դատարանն անկախ և անաչառ չի եղել: Ավելին, այն հրապարակային չի եղել, քանի որ այն եղել է դռնփակ և տեղի ունեցել է դատավորի սենյակում: Գատավարության արագությունը, իրեն բավարար ժամանակ և միջոցներ չտրամադրելը իր պաշտպանությունը նախապատրաստելու համար և այն փաստը, որ նա զրկված էր եղել վկաներ կանչելու և հարցաքննելու կամ իր օգտին ցուցմունքներ տալու իրավունքից, նրան դրել են ակնհայտ անհավասար պայմաններում իր հակառակորդի նկատմամբ: Իր նկատմամբ հարուցված գործի նյութերն իրեն չէին տրվել դատական նիստից առաջ, և դատարանը պատճառաբանված որոշում չէր կայացրել: Գատական նիստը կայացել էր ոստիկանության բաժնում՝ իրեն հարցաքննելուց անմիջապես հետո և նա զրկված է եղել փաստաբան ունենալու հնարավորությունից մինչև դատական նիստը և դրա ընթացքում:

78. Գատարանը նախ և առաջ նշում է, որ նմանատիպ փաստեր և գանգատներ արդեն քննվել են Հայաստանի Հանրապետության դեմ ներկայացված մի շարք գործերով, որոնցով Գատարանը 6-րդ հոդվածի 3-րդ մասի (բ) կետերի խախտում է ճանաչել 6-րդ հոդվածի 1-ին մասի զուգակցմամբ (տե՛ս վերը մեջբերված *Գալստյան (Galstyan)*, պարբ. 86-88, և *Աշուղյանն ընդդեմ Հայաստանի (Ashughyan v. Armenia)*, թիվ 33268/03, պարբ. 66-67, 17 հուլիս 2008թ.): Սույն գործի փաստական հանգամանքները գրեթե նույնական են: Գիմումատուի դեմ հարուցված վարչական գործը քննվել է արագացված դատաքննության կարգով՝ համաձայն ՎԻՎՕ-ի 277-րդ հոդվածի: Գիմումատուն սույն գործով ևս տարվել և պահվել է ոստիկանության բաժնում՝ առանց արտաքին աշխարհի հետ շփման հնարավորության, որտեղ էլ նրան մեղադրանք է առաջադրվել և մի քանի ժամ անց նա տարվել է դատարան և դատապարտվել: Հետևաբար, սույն գործով Գատարանը մեկ այլ եզրահանգման գալու պատճառ չի տեսնում և եզրակացնում է, որ խախտվել է դիմումատուի արդար դատաքննության իրավունքը, մասնավորապես կապված այն բանի հետ, որ վերջինիս չի տրամադրվել պատշաճ ժամանակ և հնարավորություն իր պաշտպանությունը նախապատրաստելու համար:

79. Հետևաբար, առկա է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի խախտում 6-րդ հոդվածի 1-ին մասի զուգակցմամբ:

80. Հաշվի առնելով նախորդ պարբերությունում արված հետևությունը, Գատարանը անհրաժեշտ չի համարում քննության առնել նաև 6-րդ հոդվածի այլ ենթադրյալ խախտումները:

VI. ԹԻՎ 7-ԲԴ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 2-ԲԴ ՀՈԳՎԱԾԻ ԵՆԹԱԳՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

81. Դիմումատուն Կոնվենցիայի 13-րդ հոդվածի հիման վրա բողոքել է, որ նա հնարավորություն չի ունեցել վիճարկելու 2003թ. մարտի 22-ի որոշումը: Դատարանը որոշեց քննել այս գանգատը թիվ 7-րդ Արձանագրության 2-րդ հոդվածի ներքո, որը սահմանում է.

«1. Քրեական հանցագործություն կատարելու համար դատապարտված յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որ իր դատապարտումը կամ դատավճիռը վերանայվի վերադաս դատական ատյանի կողմից: Այդ իրավունքի իրականացումը, ներառյալ դրա իրականացման հիմքերը, կարգավորվում է օրենքով»:

## Ա. Ընդունելիություն

82. Դատարանը նշում է, որ այս գանգատը Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով ակնհայտորեն անհիմն չէ: Այնուհետև այն նշում է, որ գանգատն անընդունելի չէ որևէ այլ հիմքով: Հետևաբար այն պետք է ճանաչվի ընդունելի:

## Բ. Գործի ըստ էության քննությունը

83. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուն, ՎԻՎՕ-ի 294-րդ հոդվածով նախատեսված կարգով, իրեն պատասխանատվության ենթարկելու մասին որոշման վերանայման իրավունք է ունեցել:

84. Դիմումատուն պնդել է, որ բողոքարկման իրավունքի հետ կապված բոլոր իրավական դրույթները եղել են անբավարար և անհասկանալի:

85. Դատարանը նշում է, որ սույն գործում դիմումատուի դատապարտումը կատարվել է նույն ընթացակարգով, ինչ վերոնշյալ *Գալստյանի* գործով, որով Դատարանը եզրակացրել է, որ դիմումատուն իր տրամադրության տակ չի ունեցել բողոքարկման այնպիսի ընթացակարգ, որը կհամապատասխաներ թիվ 7-րդ Արձանագրության 2-րդ հոդվածի պահանջներին (տե՛ս վերը մեջբերված *Գալստյան (Galstyan)*, պարբ. 124-27): Սույն գործով Դատարանը այդ մոտեցումից շեղվելու պատճառ չի տեսնում:

86. Հետևաբար, տեղի է ունեցել թիվ 7-րդ Արձանագրության 2-րդ հոդվածի խախտում:

VII. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԵՎ ԴՐԱՆ ԿԻՑ  
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՅԼ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

87. Վերջապես, դիմումատուն պնդել է, որ իր դատապարտման արդյունքում խախտվել են Կոնվենցիայի 10-րդ, 11-րդ և 14-րդ հոդվածներով և Առաջին արձանագրության 3-րդ հոդվածով երաշխավորված իր իրավունքները:

88. Հիմք ընդունելով գործում առկա բոլոր նյութերը այնքանով, որքանով այս գանգատները գտնվում են իր իրավասության ներքո, Դատարանը գտնում է, որ դրանցում չկա ոչինչ, որ կվկայեր այն մասին, որ առկա է Կոնվենցիայով և դրան կից արձանագրություններով երաշխավորվող իրավունքների և ազատությունների խախտում: Հետևաբար, գանգատի այս մասն ակնհայտորեն անհիմն է և ենթակա է մերժման համաձայն Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի:

#### VIII. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

89. Կոնվենցիայի 41-րդ հոդվածը սահմանում է.

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

#### Ա. Վնաս

90. Դիմումատուն պահանջել է ընդհանուր 2,500 ԱՄՆ դոլար (մոտավորապես 1,700 եվրո քննարկվող ժամանակահատվածում) նյութական վնասի համար: Մասնավորապես, նա պնդել է, որ իր կինը բարդություններով վաղաժամ ծննդաբերել էր իրեն կալանավորելու պատճառով, ինչի արդյունքում նա կրել էր բժշկական սպասարկման ծախսեր 1,300 ԱՄՆ դոլարի չափով: Նա կորցրել էր նաև 1,200 ԱՄՆ դոլար, որովհետև կալանքի ընթացքում իրեն պատկանող անասնազիաքանակի մի մեծ մաս սատկել կամ անհետացել էր: Դիմումատուն նաև պահանջել է 20,000 եվրո ոչ-նյութական վնասի համար:

91. Կառավարությունը պնդեց, որ դիմումատուն նյութական վնասի վերաբերյալ իր պահանջը հիմնավորող որևէ փաստաթուղթ չէր ներկայացրել: Ավելին, այս պահանջների և ենթադրյալ խախտումների միջև բացակայում էր պատճառահետևանքային կապը: Ինչ վերաբերում է ոչ-նյութական վնասի վերաբերյալ պահանջին, ապա Կառավարությունը պնդեց, որ եթե Դատարանը Կոնվենցիայի խախտում ճանաչի, ապա դա ինքնին բավարար փոխհատուցում կլինի: Ամեն դեպքում պահանջված գումարը չափազանցված է:

92. Դատարանը չի տեսնում որևէ պատճառահետևանքային կապ ճանաչված խախտումների և ենթադրյալ նյութական վնասի միջև. հետևաբար այն մերժում է այդ պահանջը: Մյուս կողմից Դատարանը գտնում է, որ դիմումատուն անկասկած կրել է ոչ նյութական վնաս՝ անարդար դատաքննության հետևանքով պատասխանատվության ենթարկվելու և պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումը բողոքարկելու հնարավորություն չունենալու համար, ինչի

արդյունքում նա ազատագրվել էր 10 օր ժամկետով: Առաջնորդվելով արդարացիության սկզբունքով՝ Դատարանը որոշում է դիմումատուին տրամադրել 4,500 եվրո որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում:

### **Բ. Ծախսեր և ծախքեր**

93. Դիմումատուն նաև պահանջել է 7,690 ԱՄՆ դոլար (մոտավորապես 5,230 եվրո) և 8,612.48 ֆունտ ստեռլինգ (ՄԲՖ) (մոտավորապես 10,680 եվրո) Դատարանում կրած ծախսերի և ծախքերի փոխհատուցման համար: Այս պահանջները ներառում են.

ա) 7,050 ԱՄՆ դոլար՝ որպես իր երկու ներպետական ներկայացուցիչներին վճարված գումար (ընդհանուր 35 և 18 ժամ կատարած աշխատանքի դիմաց՝ համապատասխանաբար 150 և 100 ԱՄՆ դոլար յուրաքանչյուր ժամի համար),

բ) 640 ԱՄՆ դոլար թարգմանչական ծախսերի համար,

գ) 8,512.48 ՄԲՖ Միացյալ Թագավորությունում գործող իր երեք փաստաբանների վճարների համար՝ ներառյալ KHRP-ի երկու իրավաբաններին և մեկ փաստաբանին վճարված գումարը (ընդհանուր 30 և 40 ժամ կատարած աշխատանքի դիմաց՝ համապատասխանաբար 150 և 100 ՄԲՖ յուրաքանչյուր ժամի համար), և

դ) 100 ՄԲՖ KHRP-ի կրած կազմակերպչական ծախսերի համար:

Դիմումատուն իր պահանջը հիմնավորելու նպատակով մանրամասն ժամանակացույցեր է ներկայացրել, որոնք սահմանում են ժամավճարի դրույքաչափը:

94. Կառավարությունը պնդեց, որ այս պահանջները պատշաճ հիմնավորված չեն փաստաթղթերով, քանի որ դիմումատուն չի ներկայացրել որևէ պայմանագիր, որը կվկայեր իրավաբանների հետ ենթադրյալ ժամավճարով իրավաբանական ծառայությունների մատուցման վերաբերյալ համաձայնության առկայության փաստի մասին և բացի դրանից ներկայացված ժամանակացույցերի և վճարման անդորրագրերի վրա կնիքներ դրված չէին: Ավելին, դիմումատուն օգտվել է չափից ավելի շատ իրավաբանների ծառայություններից, չնայած այն բանին, որ գործն այնքան ծավալուն չէր, որ արդարացներ նման անհրաժեշտությունը: Վերջապես, ներպետական իրավաբանների կողմից ենթադրաբար պահանջված ժամավճարը չափազանց բարձր էր: Ինչ վերաբերում է գանգատը և կից փաստաթղթերը թարգմանելու ծախսերին, ապա այս ծախսերն անհրաժեշտ չէին, քանի որ դիմումատուն ազատ էր այդ փաստաթղթերը ներկայացնել հայերեն լեզվով:

95. Համաձայն Դատարանի նախադեպային իրավունքի դիմումատուին տրամադրվում է ծախսերի և ծախքերի փոխհատուցում միայն այն դեպքում, երբ ցույց է տրվում, որ դրանք իրականում կատարվել են, եղել են անհրաժեշտ և իրենց ծավալով ողջամիտ են: Սույն գործում Դատարանն ի սկզբանե նշում է, որ թարգմանչական ծախսերը հիմնավորող որևէ փաստաթուղթ չի ներկայացվել: Ինչ վերաբերում է

իրավաբաններին վճարված գումարներին, ապա այն գտնում է, որ ոչ բոլոր հայցվող դատական ծախսերն են եղել անհրաժեշտ և ողջամիտ՝ ներառյալ օտարերկրյա և ներպետական իրավաբանների կատարած աշխատանքի որոշ կրկնությունը, ինչն արտացոլված է համապատասխան ժամանակացույցերում: Ավելին, գումարի էական նվազեցում մաս պետք է կատարվի այն բանի համար, որ նախնական գանգատի էական մասը և դրան հաջորդող գանգատները ճանաչվել են անընդունելի: Կատարելով իր գնահատումն արդարացիության սկզբունքին համապատասխան՝ Դատարանը որոշում է դիմումատուին տրամադրել 3,000 եվրո կատարված ծախսերի և ծախքերի համար, որը պետք է վճարվի ֆունտ ստեռլինգով և փոխանցվի Միացյալ Թագավորությունում նրա ներկայացուցիչների բանկային հաշվին:

#### **Գ. Չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը**

96. Դատարանը նպատակահարմար է համարում, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է հիմնված լինի Եվրոպական կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխառության տրամադրման առավելագույն տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք տոկոս:

#### **ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ**

1. *Հայտարարում է* ընդունելի Կոնվենցիայի 3-րդ հոդվածի, 6-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասի (ա)-(դ) ենթակետերի և Թիվ 7-րդ Արձանագրության 2-րդ հոդվածի ներքո ներկայացված գանգատը և անընդունելի՝ գանգատի մնացած մասը,
2. *Վճռում է*, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում կապված դիմումատուի կալանքի պայմանների հետ,
3. *Վճռում է*, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում 6-րդ հոդվածի 3-րդ մասի (բ) կետի զուգակցմամբ, քանի որ խախտվել է դիմումատուի արդար դատաքննության իրավունքը՝ մասնավորապես կապված այն բանի հետ, որ վերջինիս չի տրամադրվել պատշաճ ժամանակ և հնարավորություն իր դեմ հարուցված վարչական վարույթի շրջանակներում իր պաշտպանությունը նախապատրաստելու համար,
4. *Վճռում է*, որ անհրաժեշտություն չկա քննության առնել 6-րդ հոդվածի այլ ենթադրյալ խախտումները,

5. Վճռում է, որ տեղի է ունեցել Թիվ 7-րդ Արձանագրության 2-րդ հոդվածի խախտում,

6. Վճռում է, որ

(ա) պատասխանող պետությունը վճիռը Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ուժի մեջ մտնելուց հետո երեք ամսվա ընթացքում դիմումատուին պետք է վճարի հետևյալ գումարները.

(I) 4,500 (չորս հազար հինգ հարյուր) եվրո որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում՝ փոխարկված պատասխանող պետության ազգային արժույթով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով, գումարած նշված գումարի վրա հաշվարկվող բոլոր տեսակի հարկերը,

(II) 3,000 (երեք հազար) եվրո, գումարած նշված գումարի վրա դիմումատուի նկատմամբ հաշվարկվող բոլոր տեսակի հարկերը՝ որպես ծախսերի և ծախքերի փոխհատուցում, որը պետք է վճարվի ֆունտ ստեռլինգով Միացյալ Թագավորությունում ներկայացուցիչների բանկային հաշվին,

(բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո մինչև վճարման օրը, պետք է վճարվի նշված գումարի պարզ տոկոս Եվրոպական կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխառության տրամադրման առավելագույն տոկոսադրույքի չափով պարտավորությունների չկատարման ժամանակահատվածի համար՝ գումարած երեք տոկոս:

7. Մերժում է դիմումատուի արդարացի փոխհատուցման պահանջի մնացյալ մասը:

Կատարված է անգլերեն, գրավոր ծանուցվել է 2008թ. դեկտեմբերի 2-ին համաձայն Դատարանի Կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ և 3-րդ մասերի:

Stanley Naismith  
Քարտուղարի տեղակալ

Josep Casadevall  
Նախագահ

Համաձայն Կոնվենցիայի 45-րդ հոդվածի 2-րդ մասի և Դատարանի Կանոնակարգի 74-րդ հոդվածի 2-րդ մասի, դատավոր Ֆուրա-Սանդատրոմի համընկնող կարծիքը կցվում է սույն վճռին:

J.C.M.  
S.H.N.

**ԴԱՏԱՎՈՐ ՖՈՒՐԱ-ՍԱՆԴԱՏՐՈՍԻ ՀԱՄԸՆԿՆՈՂ ԿԱՐԾԻՔԸ**

Դատարանը, հիմք ընդունելով *Աշուղյանի (Ashughyan)* և *Գալստյանի (Galstyan)* գործերով սահմանված նախադեպային իրավունքը, գտել է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում 6-րդ հոդվածի 3-րդ մասի (բ) կետի զուգակցմամբ, քանի որ խախտվել է դիմումատուի արդար դատաքննության իրավունքը՝ մասնավորապես կապված այն բանի հետ, որ վերջինիս չի տրամադրվել բավարար ժամանակ և հնարավորություն իր պաշտպանությունը նախապատրաստելու համար (պարբ. 78): Ընդունելով այս մոտեցումը՝ այնուամենայնիվ կնախընտրելի առանձին քննել իրավական օգնության բացակայության հետ կապված գանգատները: Դիմումատուի պնդմամբ նա գրկված էր փաստաբան ունենալու հնարավորությունից մինչև դատական քննությունը և դրա ընթացքում (պարբ. 77): Նույն պատճառաբանությամբ, որը ես հայտնել եմ իմ մասնակի չհամընկնող կարծիքում *Գալստյանի (Galstyan)* գործով, որին ես հղում եմ կատարում, ես գտնում եմ, որ առկա է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի զուգակցմամբ 6-րդ հոդվածի 3-րդ մասի (գ) կետի խախտում այս իմաստով ևս: